



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱԿ**

« 07 » *փետրվարի* 2018թ.

№ 2/298-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

**Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1624-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի դրույթներն ու ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ.Միրումյանի զեկուցագիրը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ստուգումների թիվ 1 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Վարդան Սարգսյանին և նույն վարչության ստուգումների թիվ 3 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Սամվել Անտոնյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.
- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



(Handwritten signature)

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ